

ՏԵՂԵՆ - ԽՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ. ՄԱՍՈՒՐԻԱՆ

ԲԱԺՍՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԵՒՆՆԵՐ 500 ՂՐԱ  
ՎԵՑԱՍՏԵԱՅ 250  
ԵՆԱՍՏԵԱՅ 150

Բաժանորդագրութիւնք կ'սկսին  
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVELIAN MAMOUL,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



# ՓՈՒՍԱՆՑՈՒՄԻ ԶՐՋԱՆՆԵՐ

Մարդկային ընկերութիւնը միշտ դէպի նորը հակելու մասնաւոր բնազդ մը ունի:

Այս գովելի բնազդը զնահատելի է և միեւնոյն ժամանակ պարսուելի:

Գնահատելի է երբ ճիշտ ժամանակին և պարագաներու իրեն թոյլատրած առիթներէն օգտուել կ'յաջողի, իսկ պարսուելի և միանգամայն վտանգաւոր կերպ իր բազդին միայն անձնատուր, ձախող պարագաներու և անյարմար ժամանակներու մէջ ամեն զնով նորութիւններու տիրանալու միջամուխ զառնալ կ'միտի:

Աւելի պարզ խօսինք:

Ճիշտը հիմնադրութիւններն, ընդունուած կարգերն և կիրարկուած օրէնքներն բնականաբար փոփոխութիւններու կ'ենթարկուին, ժամանակներու սրտոյն և ժողովուրդի մը քաղաքակրթութեան աստիճանին համեմատ:

Անյողի պայման մըն է որմէ չեն կրնար խուսափել ինքնաձանաչութիւն ունենալ ազգերը:

Բայց փոխանցումներու կամ յեղաշրջումներու շրջաններուն, այդտեսակ փոփոխութեանց ձեռնմուխ ըլլալ խիստ վտանգաւոր եղած է և սպառնալիք մը նոյնիսկ փոփոխել փոփոխութեան հին կարգերուն համար:

Յրանձանկան մեծ յեղափոխութեան անարկու շրջանը գիտնէք թէ՛ որքա՛ն թանկագին կեանքերու և նոյնքան տաղանգաւոր անհատներու զոհարելութեան տեղի տուաւ, որովհետեւ այդտեսակ տաղանգաւոր փոխանցումի պահուն վտանգաւորիսը մը եղած է տիրող օրէնքներն փոփոխելու ձեռնարկել, նոյնպէս Ձարական ընթացիկ վերջին անկումէն յետոյ, աչքի առջեւ ունինք տեղի ունեցած այն սոսկալի անցքերն ու դէպքերն, որոնք, առաջ եկան հին կարգերու տագուտումէն և մինչև նորերու վերջնական հանգամանք մը ստանալը գիտ շատ արիւններ պիտի հոսին, և շատ տաղանգներու պիտի ենթարկուին Ձարիտու բռնակալութեան տակ զարբերէ ի վեր հեծնող ժողովուրդը:

Հետեւաբար փոխանցումի շրջաններուն մէջ օրէնքներու, տիրող կարգերու և հիմնադրութիւններու հետ կատակել անխիստ քան մը պիտի ըլլար, նախաձեռնող այն ժողովուրդներուն համար որոնք թէեւ ներքին յեղափոխութիւնէ չեն տաքապիր, սակայն իրենց շուրջ տիրող անխախտ ժողովուրդի հետ առօրեայ շփման մէջ կը գտնուին և միւս կողմէ գիրենք շրջապատող տարրերու անկերպարան կոչութենէն կրնան վնասուել:

Ահա միեւնոյն դրութեան մէջ կ'գտնուինք այսօր:

Երկիրը տնօրինակ փոխանցումի մը և անստոյգ կացութեան մը բնութեամբ է, անորոշութիւնն և անակնկալներն կրնան անյուսալի իրողութիւններու տուչեւ զնել մեզի, և մեր ձեռքէն կորցել, անցեալին մեզի կտակուած կարգ մը առանձնաշարունակներ, եթէ պիտի մը չփարսինք անոնց կամ փորձենք անոնց մէջ փոփոխութիւններ ներմուծել, հիմնելով նոր հիմնադրութիւններ կամ կարգեր, որոնք թերեւս օգտակար համարուին արտասահմանի, սակայն վնասակար թուրքիոյ մէջ բնակող հայութեան համար:

Այն սխալ կարծիքն ու համոզումը կայ, թէ վաղը երբ հռչակուի Հայաստանի ինքնօրինութիւնն, աշխարհիս ամէն կողմ գտնուած հայութիւնն, ամեն աստիճանի ու դիրքի պիտի փութալ հայրենիք հին հաստատուելու համար:

Ձերար չխաբենք և անսուտ պատրանքներով չօրօրուինք, կարգ մը կեդրոններու մէջ զարկէ ի վեր հաստատուն հիմ դրած հայութիւնն կարծուածին կամ երեւակայութեան չափ խրատ չկրնար այդ փոփոխութիւնն ընել, նոյնիսկ եթէ իր բոլոր կամեցողութիւն ի գործ դնելու ճշդի, որովհետեւ շատ դժուար է այդ կեդրոններու մէջ հիմ բռնած Հայերու՝ կարճ ժամանակի մը մէջ ամէն

քան ծրարել, ամեն տեսակ կապեր թէ բարոյական և թէ նիւթական իղել և պայուսակը թելին տակ դէպի հայրենիք ճամբայ ելնել:

Հետեւաբար տարիներու կարօտ է հայութեան ոչ արհամարհելի մէկ կասկածոր հատուածն, որպէսզի յաջողի շարժիլ և դիմել դէպի հայրենիք:

Ինչո՞ւ ուրեմն դեռ տարիներ իրենց ծննդավայրին մէջ մնալու աստիճանած հայերուն, անցեալի մէջ պտրագաներու թոյլտուութենէն օգտուելով, մեր պայերուն ձեռք ձգած ձեռնառու օրէնքներն ստանկոխ ընելու ջանադրութիւնը:

Եւ այդ օրէնքները փոփոխելու ջանադրութիւնն նոյն իսկ անոնցմէ, որոնք սրեւ կապ մը չունենալով, վաղը միւս օր առաջին պատեհութեամբ երկիր մեկնելու պատրաստակամութիւնն ունին, ինչո՞ւ հանգիստ չեն թողոր անոնք, որոնք դեռ ժամանակի մը համար և ո՛վ գիտէ թերեւս իրենց կեանքին մինչև վերջին օրերը, մնալու պիտի ստիպուին այդ կեդրոններու մէջ:

Ինչպէս ըսինք, երկիրն այս անորոշութեան և փոխանցման շրջանին արդէն մեր ձեռք ունեցած օրէնքները քանդելու ջանադիր ըլլալ, ամենամեծ սրտալ մը պիտի ըլլար, սրովհետեւ չենք կրնար գուշակել կամ կուսել թէ՛ վաղը մենք մեր ձեռքով այլտեսած ու անգործագրելի դարձուցած օրէնքին տեղ, ի՞նչ նոր օրէնք պիտի պարտադրէ, վերջապէս իրեն մականին տակ առնող պետութիւնը լաւ չէ՞ մեր ունեցածով գէթ այժմ գոհանալ, զայն բողբոջուանք պահպանել և ի հարկին վայն պաշտպանել ու ներկայից, տեղի գտալու համար, որ նոր և բնականաբար, ո՛չ լայնախոհ որեւէ օրէնք մը ներկայացուի մեզի, աւարկուելով որ չունինք հատ մը կամ եթէ ունեցած ենք, չենք գիտցած անոր յարգը և զայն խաթարած:

Ուրեմն անոնք՝ որ արդէն առժամեայ ընտելութիւն մը ունին և գրեթէ հիւրերը կ'համարուին Յոնիական եզերքներուն, լաւ ու խոհմ գործ մը ըրած պիտի ըլլան, եթէ չաշխատին տիրող կարգերը պղտորիլ և ապագային դեռ հոս մնալու դատապարտուած և որոշած հայութեան հանգիստը չվրդովեն, մղուելով պատեհապաշտ ու անապարտ բնազդէ մը, որ վնասակար հանդիսանալէ զատ տարբեր արդիւնք մը չպիտի ունենայ:

Հ. Մ.

Ինչ ալ ամուրթեան չմտնելու համար, խորհուրդ պիտի տամ մեր պաշտօնական անձնատուրութիւններուն, երկուգոյն թեմաք և լրջութեամբ մօտենալու կրթական հարցին, այս մեր գոյութեան և սպազային միակ և միակ միջոցը պիտի կազմէ:

Վարժարանական հարցը, հիւնէն ի վեր, անլուծելի խնդիր մը եղած է մեր մէջ, տարիներ սահած են և ըզգայի յառաջգիտութիւն չինք տեսած, մեր պատանի ուսանողներու վրայ, շատ ու շատ անգամներ մենք ուսուցիչներս ալ խստովանած ենք թէ, մեր վարժարանները չեն յառաջգիտել և կը մնան հոն, ուր որ են, և նոյն իսկ նախորդ տարիներու բազմաթիւ մամբ յիստամաց ալ տեսած ենք, իսկ երբ ուսուցչութիւնը անդադարձած է պատճառներուն և ուզած է մատր ուղղակի վերջին վրայ գնել, հոն բաղկած է մեծ արգելքներու, և երբ ո՛րեք ուզած են կամ յանդգնած եղած թերութիւնները մասնանշել, որոնց մեծագոյն մասը ազաներուն վրայ կ'իյնան, ահա այդ պաշտօնեաները հեռացուած են պաշտօնէ, ճշմարտութիւնը խօսած ըլլալուն և սղաներուն արժանապատուութիւնը վերաբերնուն համար:

Վարժարաններու հարցին մէջ միակ պատասխանատու մը եթէ կայ, այն ալ թաղականներն ու հոգաբարձուներն են: Անոնք որոնք ընտրուելու իրաւունքը ունին երկուստ պաշտօնեաները, ամեն նկատում մէկկողմ թողով, միայն և միայն ազգ. մանկըտուն յաստաջիտութիւնը ունենալու են իրենց նշանաբան, ընտրելու են կարողը, օգտակարը և աշխատողը, հեռի մնալու են զիրենք կեղծող, թմոյ, քու պաշտօնեանեանէն, որոնք կրթական խալաղ աշխատանքին մէջ փոթորիկներ կ'ստեղծեն: Բնականաբար երբ բնութիւնը այս կերպ ըլլայ և կրթական ղէկը յանձնուի արժանաւորներու, յառաջգիտութիւնն ալ նախանձելի կ'ըլլայ որովհետեւ հս լաւ գիտեմ մեր խղճամիտ պաշտօնեաներ:

ԱՐ ԱՐԾՆԱԿԱՆ

## ԳԵՂԱՎՈՒԵՆՑԱԼԵՐ ԳՕՐՏԷԼԷՕՅԻՆԵՐ ԳԻՏՏԷՔ ՕԳՏՈՒՆԼ

Թանկագին առիթէ՛, ընծայուած «Չարթօք» Լարնկ. Մթութեան կողմէ վայելելու համար տնքան մեծ գնահատութեանց արժանացած «Արցունի Լուսին» ներկայացումը, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ 2 Օգոստ. Եր. օր ժ. 9, 30ին Օլիմբիա (Գլուպ) մասնաւոր թատրոնին մէջ: Գին տոմսակի Ա. կարգ 100, Բ. 50 կարգ Գ. կարգ 25 զրէ:

## ԿԵՆՍԱԿԱՆ ԲԱՑՑ ՄԱՍՈՒՐ ԱՆՏԵՍ ԱՌՆՈՒԱԾ ՀԱՐՑ ՄԸ

Հայաջինջ քաղաքականութեան հինգ երկար տարիներու շրջանին, որքան որ մեր մտաւորականներու մէկ մեծագոյն մասը կորսնցուցինք, միեւնոյն ժամանակ մեր մատող սերունդէն ողջ մնացողներուն 100ին 95ը ալ զուրկ մնաց մտաւոր և բարոյական զարգացումէ: Ինչպէս ուրիշ անդամներու նմանօրինակ դէպքերէ վերջ, այս անկամ ալ հայր իր կենսունակութիւնը ցոյց տալով մեծ թափով սկսաւ հետապնդել իր մանուկներուն մտաւորական զարգացումը, վարժարանը:

Այո՛, թերթերու մէջ կը տեսնեմ յայտարարութիւններ պաշտօնական անձերու և ուսուցիչներու կողմէ, մին պաշտօնեայի և միւսը պաշտօնի հետամուտ, անչուշտ ըստ նախկին սովորութեանց, կարգ մը անհատներ զարձեայ սկսած են շահագործիլ գաւառի հայութիւնը, անոնց զրկելով անուշով միայն ուսուցիչներ ու ուսուցչուհիներ, բացառութիւնները յարգելով սակայն, ստանալու համար անոնց առաջին ամսականը: Անշուշտ տակաին շատ ու շատ տեղեր, մէջն ըլլալով կեդրոններն ալ, մեր ազգ. թաղականներն ու հոգաբարձուները տակաին իրենց հին սովորութիւնները պիտի կիրարկեն իրենց պաշտպանեալներուն նկատմամբ, պիտի հեռացնեն արժանաւորներն և աշխատողները, ուղղամիտներն ու թերութիւններ մատնանշողները, ըմբատ են բսելով, պիտի պահեն կեղծողները, չողբորթները ու ապիկարները: Իրաւ է որ այդպիսի պաշտօնեաներու օրերը համբուած են և խիստ մտաւոր ապագային հայկական կառավարութիւնը ինք պիտի անօրինէ վարժարաններու ճակատագիրը, բայց յառաջիկայ տա-

